Հաշվետվություն

Անունը, Ազգանունը

Միեր Գրիգորյան

Զբաղեցրած պաշտոնը

Փոխվարչապետ

Գործուղման վայրը և ժամկետները

Ալմաթի, Ղազախստանի Հանրապետություն, 31.01.19-02.02.19

Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն «Գլոբալիզացիայի դարաշրջանում թվային օրակարգը 2.0. եվրասիական նորարական էկոհամակարգ» համաժողովին և Եվրասիական միջկառավարման խորհրդի նիստին:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ղազախստանի Հանրապետությունում աշխատանքային այցով գտնվող փոխվարչապետ Միեր Գրիգորյանն Ալմաթիում ԵԱՏՄ մյուս անդամ պետությունների վարչապետների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահի և ՏՏ ոլորտում միջազգային փորձագետների հետ միասին մասնակցել է «Գլոբալիզացիայի դարաշրջանում թվային օրակարգը 2.0. Եվրասիական նորարական էկոհամակարգ» համաժողովի լիագումար նիստին:

Լիագումար նիստին փոխվարչապետ Միեր Գրիգորյանը հանդես է եկել ելույթով և ՀՀ կառավարության անունից շնորհակալություն հայտնել ղազախական կողմին միջոցառումը բարձր մակարդակի կազմակերպելու համար: Փոխվարչապետը նշել է, որ այդ համաժողովը կարևոր հարթակ է, որը հնարավորություն է տալիս համատեղելու ԵԱՏՄ երկրների ջանքերը՝ ուղղված տնտեսությունների թվայնացմանը և դրանով իսկ

դրանց մրցունակության բարձրացմանը: Մեր Գրիգորյանը շեշտել է, որ ՀՀ կառավարությունը մեծ նշանակություն է տալիս թվայնացման ոլորտին՝ ընդգծելով, որ վերջին տարիներին Հայաստանում զգալի առաջընթաց է գրանցվել տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների զարգացման ոլորտում:

Իր ելույթում փոխվարչապետը նաև անդրադարձել է առաջիկայում Երևանում մեկնարկող Ինժեներական քաղաքի կառուցմանը, որը կնպաստի նորարարական գաղափարների մշակմանն ու դրանց ներդրմանը ոչ միայն տեղական շուկայում, այլև Հայաստանի սահմաններից դուրս:

Փոխվարչապետը նշել է, որ Հայաստանն արդեն իսկ ունի բավականին լավ մշակված ծրագրեր թվայնացման ուղղությամբ, մասնավորապես հարկային, մաքսային ոլորտներում, որը կարող է հիմք հանդիսանալ թվայնացման հետագա զարգացման և այդ ոլորտում ԵԱՏՄ երկրների հետ փորձի փոխանակման համար: ՏՏ ոլորտում կրթությանն անդրադառնալիս Մեր Գրիգորյանը կարևորել է ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի գործունեությունը, որն արդեն հայկական բրենդ է դարձել ամբողջ աշխարհում: Փոխվարչապետը համաժողովի մասնակիցներին որպես հաջողված փորձ ներկայացրել է նաև Հայաստանում իրականացվող «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների հիմնման ծրագիրը, որը հնարավորություն է տալիս աշակերտներին ուսումնասիրել ռոբոտաշինությունը:

Փոխվարչապետ Մեր Գրիգորյանը Հայաստանի կառավարության անունից հրավիրել է համաժողովի հյուրերին և ՏՏ ոլորտի ներկայացուցիչներին մասնակցելու Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային կոնգրեսին, որը տեղի է ունենալու Երևանում այս տարի հոկտեմբերի 6-9-ին: Փոխվարչապետը նշել է, որ միջոցառմանը մասնակցելու են ՏՏ ոլորտում համաշխարհային ճանաչում ունեցող կազմակերպություններ:

Փոխվարչապետ Մեր Գրիգորյանն այնուհետև ներկա է գտնվել Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստին: Օրակարգում 2018 թվականին ԵԱՏՄ անդամ պետությունների միջև փոխադարձ առևտրի և մակրոտնտեսական իրավիճակի քննարկումն էր: Անդրադարձ է կատարվել ԵԱՏՄ անդամ պետությունների և Սերբիայի Հանրապետության միջև ազատ առևտրի համաձայնագրի վերաբերյալ

բանակցությունների ընթացքին, ինչպես նաև միության թվային օրակարգին: Խորհրդի նիստի ընթացքում որոշվել է, որ ԵԱՏՄ միջկառավարական խորհրդի հաջորդ նիստը կկազմակերպվի գարնանը Հայաստանում:

<u>Գործուղվողը</u>

Միեր Գրիգորյան

<u>Ամսաթիվը</u>

06.02.19